

թիւն աշակերտին, ըստ Առակին, եթէ Ուրախ
 115 լիցի սիրտ քո, ուրախ արասցես եւ զիմ
 սիրտ:

Դու լեր հլու եւ հպատակ
 Վարժապետիդ մըտօք յըստակ.
 Ունի ընդ քեզ աշխատ զերկակ
 120 Եւ զի շնորհօք դու ես որդեակ:

Իններորդ. կայ մայր որ երանութեան
 մահուամբ կու մեռանի. կայ որ թշուառու-
 թեան: Դարձեալ երանութեան մահ այն է որ
 եւթանասնամեայ լինի ըստ Դաւթայ եւ տե-
 125 սանէ զորդիս որդւոցն խաղաղական կենօք
 զհասարակաց մահն վճարէ. այս երանութիւն
 է եւ ոչ մահ:

Ժ. Թշուառութեան մահ այն է որ ծնողն
 երիտասարդական հասակն լինի կամ սուղ ինչ
 130 աւելի. եւ լինի որդի իւր ըստնդեայ. եւ զորն
 անկատար յանկարծմահ հասանի իւրն. հայի
 տեսանէ զտղան իւր կաթնակեր ի լաց եւ ոչ
 կարէ օգնել. սիրտն ի կախ մեռանի. այս է
 թշուառութեան եւ լալու մահ: Ո՛վ մահ,
 135 դառն է յիշումն քո. որչափ յիշեմք զքեզ՝ քանց
 զուռ զողամ:

Վա՛յ ասեմ այնպէս որդուն
 Որ անջատեալ ի մօր ծոցուն.

116 A կը յաւելու վա՛յ ինձ եւ եղուկ է. ես ան-
 ձամբ գանձն իմ դատապարտեմ: — 120 զի՛ չիֆ A:
 — 121 կայ չիֆ՛ B: — 132 գաղայն B: — 133 ի չիֆ B:
 — 135 քան B: — 138 ծոցոյն A: